ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/8 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ՀՀ ՊԵԿ-ում ներդրված նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների էլեկտրոնային համակարգերի և համալրող միջոցների սպասարկման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 09.01.2019թ. N 02/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 04.02.2019թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Ավետիսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Խաչատրյանը, Հ.Նաջարյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/8 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով «Այյունեթվորքս» ՍՊԸ-ի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշով պահանջվող փաստաթղթերը և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը /կցվում է/՝ գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Ավետիսյանը ներկայացրեց հանձնաժողովի անդամների կողմից իրականացված հայտի գնահատման արդյունքները/գնահատման թերթիկները կցվում է/, որի հիման վրա հանձնաժողովը որոշեց՝
-Հաշվի առնելով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվությունը և «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշով պահանջվող փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին՝
- առաջին տեղը զբաղեցրած «Այյունեթվորքս» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:
-Քանի որ, գնման ընթացակարգին միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել և անգործության ժամկետը կիրառելի չէ՝ ուստի ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «Այյունեթվորքս» ՍՊԸ-ին՝ պայմանագիր կնքելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Ավետիսյան

Անդամներ՝ Ա.Խաչատրյան

Հ.Նաջարյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան